

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի դեկտեմբերի 11

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության հարկերի եւ գանձումների հարցերով նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միությունում ապրանքների ներմուծման եւ արտահանման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» համաձայնագրի 6-րդ հոդվածով,

ելնելով ապրանքների ներմուծման եւ արտահանման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ անուղղակի հարկերի ժամանակին եւ ամբողջական մուտքերի նկատմամբ վերահսկողության ուժեղացման հարցում փոխադարձ շահագրգռվածությունից,

ցանկանալով այդ նպատակով միմյանց աջակցություն տրամադրել,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Սույն Արձանագրությամբ սահմանվում է էլեկտրոնային ձեռով տեղեկատվության՝ կապուղիներով փոխանակման կարգը, տեղեկատվության անվտանգությունն ապահովող՝ տեղեկատվության պաշտպանության միջոցների կիրառմամբ, հետեւյալ արձանագրությունների իրականացման նպատակներով՝

Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի վերաբերյալ,

Մաքսային միությունում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի վերաբերյալ:

Հոդված 2

Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինները (այսուհետ՝ Հարկային մարմիններ) տեղեկատվություն են փոխանակում Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների, հարկային արտոնությունների (հարկազատման) վերաբերյալ՝ ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմումների ռեեստրների ձեւով (այսուհետ՝ դիմումների ռեեստր) այնպիսի ֆայլերի ձեւով, որոնք կազմվել են համաձայն «Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների մասին էլեկտրոնային ձեւով տեղեկատվության կազմի եւ կառուցվածքի նկատմամբ պահանջների»:

«Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների մասին էլեկտրոնային ձեւով տեղեկատվության կազմի եւ կառուցվածքի նկատմամբ պահանջները» կցված են սույն Արձանագրությանը որպես հավելված:

Մաքսային մարմիններն ապահովում են Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների մասին տեղեկատվության ամբողջական եւ արժանահավատ լինելը:

Մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումը իրականացվում է յուրաքանչյուր ամիս այն ամսվա 15–րդ օրվանից ոչ ուշ, որում մաքսային մարմինը ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմումի (այսուհետ՝ դիմում) վրա նշում է կատարել. դիմումի ձեւանմուշը եւ դիմումը լրացնելու կանոնները սույն Արձանագրության հավելվածներ են կազմում:

Դիմումների ռեեստրը ստացող հարկային մարմինը դիմումների ռեեստրը ստանալուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օր հետո ուղարկող հարկային մարմին է ուղարկում է ձեռագրի-տրամաբանության ստուգման արձանագրություն, որը միաժամանակ տեղեկատվության ընդունման մասին ծանուցում է:

Ձեռագրի-տրամաբանության ստուգման արձանագրության մեջ սխալների առկայության դեպքում ուղարկող հարկային մարմինը միջոցներ է ձեռնարկում դրանք վերացնելու համար եւ ուղղված տեղեկատվությունն ուղարկում է ստացող հարկային մարմինն ձեռագրի-տրամաբանության ստուգման արձանագրության ստացման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարկ վճարողի (վճարողի) կողմից դիմումի օրինակը հարկային մարմիններ թղթային կրիչի վրա ներկայացվելու եւ դրա էլեկտրոնային տարբերակի բացակայության դեպքում, տեղեկատվությունը ստացող հարկային մարմինը կազմում է դիմումը էլեկտրոնային ձեով ներկայացվելու մասին հարցում:

Հարցումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը հարկային մարմինների միջեւ իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ հարցումների ռեեստրի ձեով: Ընդ որում, էլեկտրոնային ձեով Հարցումների ռեեստրը տեղեկատվությունը ստացող հարկային մարմնի կողմից կապուղիներով տեղեկատվությունն ուղարկող հարկային մարմին է ուղարկվում ամեն ամիս՝ ոչ ուշ քան յուրաքանչյուր ամսվա 25-րդ օրը: Հարցումների ռեեստրը ստանալուց 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ տեղեկատվությունն ուղարկող հարկային մարմինը տեղեկատվությունը ստացող հարկային մարմինն պատասխան է ուղարկում դիմումների ռեեստրի եւ(կամ) դրանց բացակայության մասին ծանուցումների ռեեստրի ձեով:

Անհրաժեշտության դեպքում տեղեկատվությունը ուղարկող հարկային մարմինը կարող է հետ կանչել դիմումը:

Տեղեկատվության փոխանակման կարգի խախտման, ինչպես նա եւ փոխանակման ընթացքում տվյալների ամբողջականության եւ պաշտպանության խախտման դեպքում հարկային մարմինները պարտավորվում են տեղեկացնել միմյանց վերոհիշյալ խախտումը հայտնաբերելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 3

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է ռուսերեն լեզվով:

Հոդված 4

Հարկային մարմիններն ինքնուրույն մշակում են ծրագրային ապահովում, որով իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների, հարկային արտոնությունների (հարկազատման) մասին տեղեկատվության պատրաստումը, ընդունումը ու փոխանցումը:

Հոդված 5

Փոխանակման իրականացման ժամանակ տեղեկատվության պաշտպանության միջոցների կիրառումը հարկային մարմինների կողմից համաձայնեցվում է՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 6

Կողմերի փոխհամաձայնությամբ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 7

Կողմերի միջեւ սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերն ու տարաձայնությունները լուծվում են կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ վեճը հանձնվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 8

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման սկզբունքների մասին» համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ քնօրինակով՝ ռուսերենով:

Սույն արձանագրության քնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի Հանրապետության
Հարկերի եւ գանձումների
հարցերով նախարարության
կողմից

(Ստորագրություն)

Ղազախստանի
Հանրապետության
Ֆինանսների
նախարարության կողմից

(Ստորագրություն)

Ռուսաստանի Դաշնության
Ֆինանսների
նախարարության կողմից

(Ստորագրություն)

Հավելված 1

«Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև
անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով
տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության

Ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմում էջ

Բաժին 1.

Համար	Օր	Ամիս	Տարի
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Վաճառող

Գնորդ

ՎՀՀ (վճարողի հաշվառման համար) կամ ՀՎՆՀ (հարկ վճարողի նույնականացման համարը) /ՀՀԾ (հաշվառման հիմքի ծածկագիր) կամ ՀՎԳՀ (հարկ վճարողի գրանցման համար)/ԲՆՀ (քիզնես-նույնականացման համար)|ԱՆՀ (անհատական նույնականացման համարը) ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

01 _____
(կազմակերպության անվանումը,
ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ը))

02 _____
(կազմակերպության անվանումը,
ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ը)

03 _____
(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության)վայրը)

04 _____
(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության)վայրը)

05 պայմանագրի համարը՝ _____ պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ. Մասնագրի համարը՝ _____ մասնագրի ամսաթիվը՝ _____, _____

06 _____
 (կազմակերպության անվանումը (անհատ ձեռներեցի Ա.Ա.Հ-ն), երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը)

07 Պայմանագրի համարը՝ _____ պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ. Մասնագրի համարը՝ _____ մասնագրի ամսաթիվը _____, _____

(լիզինգի պայմանագրի կնքման դեպքում վանդակում կատարվում է X նշումը,

պատվիրատուի կողմից տրամադրված հումքի վերամշակման վերաբերյալ պայմանագրի կնքման դեպքում վանդակում կատարվում է X նշումը)

N հհ	Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրը ՄԱԱ (Միասնական ապրանքային անվանացանկ) ծածկագիրը	Ապրանքի չափման միավորը	Ապրանքի քանակը	Ապրանքի (աշխատանքի) արժեքը	Արժույթը		Տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթուղթ		Հաշիվ-ապրանքագիր		Ապրանքի հաշվառման ամսաթիվը	Հարկման բազա		Հարկի դրույքաչափեր		Հարկերի գումարներ		
						ծածկագիր	փոխարժեք						ակցիզներ	ԱԱՀ	ակցիզներ	ԱԱՀ	ակցիզներ	ԱԱՀ	
								սերիա, համար	ամսաթիվ	համար	ամսաթիվ								ակցիզներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
ԸՆԴԱՄԵՆԸ՝		X	X	X	X	X	X	X	X	X	X	X			X	X	X		

Հաստատում ենք սույն դիմումի մեջ ներկայացված տվյալների արժանահավատ եւ ամբողջական լինելը

Կ.Տ.

Կազմակերպության ղեկավարի Ա.Ա.Հ. ստորագրություն ամսաթիվ
(լիազորված անձի) – գնորդի
(անհատ ձեռնարկատիրոջ – գնորդի)

Գլխավոր հաշվապահի Ա.Ա.Հ. ստորագրություն ամսաթիվ

էջը -ից

								серия, номер	дата	номер	дата		акцизов	НДС	твердые (специ- фичес- кие)	адвалорные			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
ИТОГО:		X	X	X	X	X	X	X	X	X	X	X			X	X	X		

Достоверность и полноту сведений, приведенных в данном заявлении, подтверждаем

М.П.

 Ф.И.О. руководителя организации подпись дата
 (уполномоченного лица) - покупателя
 (индивидуального предпринимателя
 - покупателя)

 Ф.И.О. главного бухгалтера подпись дата

Страница из

Բաժին 2:

Համար	Օր	Ամիս	Տարի

Դիմումի գրանցման վերաբերյալ նշում հարկային մարմին ներկայացման ժամանակ

Համար Օր Ամիս Տարի

--	--	--	--

Անուղղակի հարկերի վճարման (ԱԱՀ-ից ելկամ) սկզբից հարկազատման)) վերաբերյալ հարկային մարմնի կողմից նշումը կատարվում է ըստ գնորդի հաշվառման վայրի տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած դիմումի գրանցման մասին նշումը կատարելու ամսաթվից

վճարվել է _____ գումարի չափով ԱԱՀ

_____ գումարի չափով սկզբիցները վճարված են

_____ տեսուչի Ա.Ա.Հ. պաշտոն ստորագրություն ամսաթիվ

Ղեկավար
(ղեկավարի տեղակալ)

_____ Կ.Տ.
հարկային ստորագրություն ամսաթիվ
մարմնի անվանում

1) Այն դեպքում, երբ հարկային մարմինը բացահայտում է հարկ վճարողի կողմից լրացված դիմումի վավերապայմանների անհամապատասխանությունը «Մաքսային միությունում անուղղակի հարկերի գանձման կարգի եւ արտահանման եւ ներմուծման ժամանակ այդ հարկերի վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի մասին» արձանագրության պահանջների հետ, ապա հարկային մարմինը նշում է կատարում անուղղակի հարկերի վճարման մասին, նրանից հետո, երբ հարկ վճարողը վերացնում է բացահայտված անհամապատասխանությունները:

Էջը

|

Բաժին 3.

Համար	Օր	Ամիս	Տարի

Վաճառող, կոմիտենտ, Գնորդ, կոմիսիոներ,
 հանձնարարող, պրինցիպալ հանձնակատար, գործակալ
 (համապատասխան մասն ընդգծել) (համապատասխան մասն ընդգծել)

ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ) ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

08 _____ 09 _____
 (կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը (կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
 անհատ ձեռնարկատիրոջ) անհատ ձեռնարկատիրոջ)

10 _____ 11 _____
 (երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը) (երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը)

12 Պայմանագրի համարը՝ _____ Պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ.
 Մասնագրի համարը՝ _____, _____ մասնագրի ամսաթիվը՝ _____, _____

_____ Կ.Տ.
 Կազմակերպության ղեկավարի Ա.Ա.Հ.-ն, ստորագրությունը, ամսաթիվ
 (լիազորված անձի) – գնորդի
 (անհատ ձեռնարկատիրոջ – գնորդի)

_____ Գլխավոր հաշվապահի Ա.Ա.Հ.-ը ստորագրությունը ամսաթիվ

Номер Число Месяц Год

--	--	--	--

<p>Отметка о регистрации заявления при представлении в налоговый орган</p> <p>Номер Число Месяц Год</p> <table border="1"><tr><td></td><td></td><td></td><td></td></tr><tr><td></td><td></td><td></td><td></td></tr></table>									<p>Отметка налогового органа об уплате косвенных налогов (освобождении от налогообложения НДС и (или) акцизов) по месту постановки на учет покупателя производится в течение десяти рабочих дней с даты отметки о регистрации Заявления.</p> <p>НДС в сумме _____ уплачен</p> <p>Акцизы в сумме _____ уплачены</p> <p>_____ Ф.И.О. должность подпись дата инспектора</p> <p>_____ Руководитель (заместитель руководителя)</p> <p>_____ наименование подпись дата налогового органа</p> <p>М.П.</p>

1) В случае установления налоговым органом несоответствия заполненных налогоплательщиком реквизитов заявления требованиям [Протокола](#) о порядке взимания косвенных налогов и механизме контроля за их уплатой при экспорте и импорте товаров в таможенном союзе налоговый орган производит отметку об уплате косвенных налогов после устранения выявленных несоответствий налогоплательщиком.

Страница из

Раздел 3.

Номер Число Месяц Год

Продавец, комитент,
доверитель, принципал
(нужное подчеркнуть)

Покупатель, комиссионер,
поверенный, агент
(нужное подчеркнуть)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

08 _____
(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

09 _____
(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

10 _____
(код страны, место нахождения
жительства)

11 _____
(код страны, место нахождения
жительства)

12 N договора (контракта) _____ Дата договора (контракта) _____ 20__ г.
N спецификации ____, ____ дата спецификации ____, ____

Ф.И.О. руководителя организации
(уполномоченного лица) – покупателя
(индивидуального предпринимателя –
покупателя)

подпись _____
дата

М.П.

Ф.И.О. главного бухгалтера

подпись _____
дата

Հավելված

Ապրանքների ներմուծման եւ անուղղակի
հարկերի վճարման մասին դիմումի

Համար	Օր	Ամիս	Տարի
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Վաճառող (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/
կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)

Գնորդ (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/
կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)

ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

Պայմանագրի համարը՝ _____ Պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ.
Մասնագրի համարը՝ _____, _____ մասնագրի ամսաթիվը՝ _____, _____

Վաճառող (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/

Գնորդ (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/

կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)


ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

Պայմանագրի համարը՝ _____ Պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ.
Մասնագրի համարը՝ _____, _____ մասնագրի ամսաթիվը՝ _____, _____

Վաճառող (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/
կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)



ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

Պայմանագրի համարը՝ _____ Պայմանագրի ամսաթիվը՝ _____ 20__ թ.
Մասնագրի համարը՝ _____, _____ մասնագրի ամսաթիվը՝ _____, _____


կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)

ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

Գնորդ (կոմիսիոներ,
հանձնակատար, գործակալ/
կոմիտենտ, հանձնարարող,
պրինցիպալ) (համապատասխան մասն ընդգծել)



ՎՀՀ կամ ՀՎՆՀ /ՀՀԾ կամ ՀՎԳՀ/(ԲՆՀ |ԱՆՀ)

(կազմակերպության անվանումը, Ա.Ա.Հ.-ը
անհատ ձեռնարկատիրոջ)

(երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրը))

Номер Число Месяц Год

--	--	--	--

Продавец (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

Покупатель (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(код страны, место нахождения
жительства))

(код страны, место нахождения
жительства))

N договора (контракта) _____ Дата договора (контракта) _____ 20__ г.
N спецификации _____, _____ дата спецификации _____, _____

Продавец (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

Покупатель (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(код страны, место нахождения
жительства))

(код страны, место нахождения
жительства))

N договора (контракта) _____ Дата договора (контракта) _____ 20__ г.
N спецификации _____, _____ дата спецификации _____, _____

Продавец (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

Покупатель (комиссионер,
поверенный, агент/
комитент, доверитель,
принципал) (нужное подчеркнуть)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

УНП или ИНН/КПП или РНН/ (БИН|ИИН)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(наименование организации, Ф.И.О.
индивидуального предпринимателя)

(код страны, место нахождения
жительства))

(код страны, место нахождения
жительства))

N договора (контракта) _____ Дата договора (контракта) _____ 20__ г.
N спецификации _____, _____ дата спецификации _____, _____

Հավելված 2

**«Մաքսային միության անդամ պետությունների
հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի
վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային
ձեռով տեղեկատվության փոխանակման մասին»
արձանագրության**

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

ԵՎ ԱՆՈՒՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սույն կանոններով սահմանվում է ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմումի (այսուհետ՝ դիմում) լրացման կարգը՝ «Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության 1-ին հավելվածում ներկայացված ձեւանմուշով:

1. Հարկ վճարողի (վճարողի) (այսուհետ՝ Հարկ վճարող) կողմից դիմումը թղթային կրիչի վրա՝ չորս օրինակից եւ էլեկտրոնային ձեռով ներկայացվում է հաշվառման վայրի հարկային մարմին:

Դիմումի մեկ օրինակը մնում է հարկային մարմնում, երեք օրինակները վերադարձվում են հարկ վճարողին՝ հարկային մարմնի նշումով, որով հաստատվում է անուղղակի հարկերի լրիվ ծավալով վճարումը (ավելացված արժեքի հարկից (այսուհետ՝ ԱԱՀ) եւ (կամ) ակցիզներից ազատումը կամ վճարման այլ կարգը այն ապրանքների համար, որոնք Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն այդ պետության տարածք են ներմուծվել առանց անուղղակի հարկերի վճարման): Մաքսային մարմնի նշմամբ դիմումի երկու օրինակները հարկ վճարողի կողմից պետք է ուղարկվեն Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողին, որի տարածքից

արտահանվել են ԱԱՀ-ի զրո տոկոս դրույքաչափով (ակցիզներից ազատմամբ) իրացված ապրանքները:

2. Դիմումը կազմված է երեք բաժիններից եւ կցված հավելվածից:

Դիմումի առաջին եւ երրորդ բաժինները եւ դրա հավելվածը լրացվում են հարկ վճարողի կողմից, իսկ երկրորդ բաժինը՝ հարկային մարմնի կողմից:

Դիմումի «Վաճառող/Գնորդ» տողերում նշվում են՝

Բելառուսի Հանրապետության հարկ վճարողների համար՝ ՎՀՀ-ն (վճարողի հաշվառման համարը), Ղազախստանի Հանրապետության հարկ վճարողների համար՝ ՀՎԳՀ-ն (հարկ վճարողի գրանցման համարը) կամ ԲՆՀ-ն (բիզնեսնույնականացման համարը) կամ ԱՆՀ-ն (անհատական նույնականացման համարը), Ռուսաստանի Դաշնության հարկ վճարողների համար՝ ՀՎՆՀ-ն (հարկ վճարողի նույնականացման համարը) /ՀՀԾ-ն (հաշվառման հիմքի ծածկագիրը)։

Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը.

Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) երկրի ծածկագիրը, գտնվելու (բնակության) վայրի հասցեն:

Լիզինգի պայմանագրի կնքման դեպքում համապատասխան վանդակում կատարվում է «X» նշումը:

Պատվիրատուի կողմից տրամադրված հումքի վերամշակման մասին պայմանագրի կնքման դեպքում համապատասխան վանդակում կատարվում է «X» նշումը:

Դիմումի լրացման ժամանակ, բացի համապատասխան պայմանագրերից վերցված տեղեկություններից, օգտագործվում են նա եւ տեղեկատվական հաղորդագրություններից վերցված տեղեկությունները:

Հարկ վճարողը դիմումի յուրաքանչյուր թերթում նշում է դիմումի համարը եւ լրացման ամսաթիվը:

Դիմումը ստորագրում է կազմակերպության ղեկավարը կամ դրա ներկայացուցիչը եւ գլխավոր հաշվապահը կամ անհատ ձեռնարկատերը: Ներկայացուցչի

լիազորությունները պետք է հաստատված լինեն Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. 1-ին բաժինը լրացնելու կարգը

Վաճառող (տող 01)՝ 02 տողում նշված գնորդի կամ ի շահ գնորդի գործող կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի հետ պայմանագիր կնքած անձ:

Գնորդ (տող 02)՝ ապրանքները ձեռքբերող եւ հաշվառման վայրի հարկային մարմին դիմումը ներկայացնող անձ:

1-ին բաժինը լրացնում է ապրանքների գնորդը (կոմիսիոները, հանձնակատարը կամ գործակալը, եթե Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված է այդ անձանց կողմից անուղղակի հարկերի վճարումը Մաքսային միության մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների ներմուծման ժամանակ):

05 տողում նշվում են վաճառողի եւ գնորդի միջեւ կնքված պայմանագրի վավերապայմանները (պայմանագրի համարը եւ ամսաթիվը, մասնագրերի համարները եւ ամսաթվերը):

Կոմիսիայի, հանձնարարության կամ գործակալության պայմանագրի համաձայն կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի միջոցով ապրանքների ձեռքբերման ժամանակ, եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ չի նախատեսվում վերոհիշյալ անձանց կողմից անուղղակի հարկերի վճարումը Մաքսային միության մեկ անդամ պետության տարածքից մյուսի տարածք ապրանքների ներմուծման ժամանակ՝

ա) 01 «Վաճառող» տողում նշվում է գնորդի հետ պայմանագրի համաձայն կոմիսիոներ, հանձնակատար կամ գործակալ հանդիսացող անձին ապրանքներ վաճառող անձը,

բ) 02 «Գնորդ» տողում նշվում է սույն կետի «ա» ենթակետում նշված կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի հետ պայմանագրի համաձայն կոմիտենտ, հանձնարարող կամ պրինցիպալ հանդիսացող անձը,

գ) 05 կետում արտացոլվում են սույն կետի «բ» ենթակետում նշված գնորդի եւ կոմիսիոնների, հանձնակատարի կամ գործակալի միջեւ պայմանագրի վավերապայմանները,

դ) 06 տողում արտացոլվում է, մասնավորապես, «դ» ենթակետում նշված պայմանագրի համաձայն կոմիսիոններ, հանձնակատար կամ գործակալ հանդիսացող կազմակերպության լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.<.-ը),

ե) 07 տողում արտացոլվում են սույն կետի «գ» ենթակետում նշված կոմիսիոնների, հանձնակատարի կամ գործակալի եւ սույն կետի «ա» ենթակետում նշված վաճառողի միջեւ պայմանագրի վավերապայմանները:

Մաքսային միության անդամ պետության հարկ վճարողի կողմից տվյալ անդամ պետության տարածք պատվիրատուի կողմից տրամադրված այնպիսի հումքի վերամշակման արդյունք հանդիսացող ապրանքների ներմուծման դեպքում, որը ձեռք է բերվել Մաքսային միության այլ անդամ պետության տարածքում եւ վերամշակվել է Մաքսային միության երրորդ անդամ պետության տարածքում, լրացվում է 2 (երկու) դիմում, ընդ որում՝

ապրանքների (պատվիրատուի կողմից տրամադրված հումքի) վաճառողին ուղարկվող դիմումի սյունակները լրացնելիս՝ աղյուսակի 2-րդ եւ 6-րդ սյունակներում նշվում են համապատասխանաբար՝ պատվիրատուի կողմից տրամադրված հումքի անվանումը եւ արժեքը,

պատվիրատուի կողմից տրամադրված հումքի վերամշակմանն աշխատանքների վաճառողին ուղարկվող դիմումի սյունակները լրացնելիս՝ 2-րդ եւ 6-րդ սյունակներում նշվում են համապատասխանաբար՝ վերամշակման արդյունք հանդիսացող ապրանքի անվանումը եւ պատվիրատուի կողմից տրամադրված հումքի վերամշակմանն աշխատանքների արժեքը:

Հարկ վճարողի կողմից ապրանքների ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գումարները որոշելու համար լրացվում է աղյուսակ, որում նշվում է՝

2-րդ սյունակում՝ ապրանքի անվանումը՝ հաշիվ-ապրանքագրի եւ տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթերի հիման վրա: Եթե գոյություն ունի ապրանքների մեծ քանակ արտահայտելու անհրաժեշտություն, ապա թույլատրվում է կոնկրետ

ապրանքների անվանումների ցանկի փոխարեն արտացոլել այդ ապրանքների ընդհանուր տեսակը (օրինակ՝ «կահույք»՝ «գրասեղանների», «մահճակալների», «բազկաթոռների» փոխարեն) դիմումի մեկ տողում եւ դիմումի այդ տողի համապատասխան սյունակներում արտացոլել ապրանքների նշված տեսակի շարքին դասված ապրանքների վերաբերյալ տեղեկությունները,

3-րդ սյունակում՝ ապրանքի ծածկագիրը (10 նիշ), ըստ Մաքսային միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ենթակարգային ապրանքների, եւ ապրանքների առանձին կատեգորիաների համար՝ ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափի կիրառման դեպքում, ինչպես նա եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,

4-րդ սյունակում՝ ապրանքի քանակի չափման միավորը, որը նշված է հաշիվ-ապրանքագրում եւ տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթում,

5-րդ սյունակում՝ ապրանքի քանակը՝ 4-րդ սյունակում նշված չափման միավորներով արտահայտված,

6-րդ եւ 7-րդ սյունակներում՝ ապրանքի (աշխատանքի) արժեքը եւ արժույթի ծածկագիրը՝ հաշիվ-ապրանքագրի կամ տրանսպորտային (բեռն ուղեկցող) փաստաթղթերի տեղեկություններ հիման վրա,

8-րդ սյունակում՝ Մաքսային միության անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի կողմից սահմանված ազգային արժույթի փոխարժեքը հաշիվ-ապրանքագրում կամ տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթում նշված արժույթի նկատմամբ՝ ապրանքները հաշվառման վերցնելու ամսաթիվը,

9-րդ սյունակում՝ տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթերի սերիան, համարը,

10-րդ սյունակում՝ տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթերի ամսաթիվը,

11-րդ սյունակում՝ հաշիվ-ապրանքագրի համարը,

12-րդ սյունակում՝ հաշիվ-ապրանքագրի ամսաթիվը,

13-րդ սյունակում՝ հարկ վճարողի կողմից ապրանքը հաշվառման վերցնելու ամսաթիվը,

14-րդ սյունակում՝ հարկման բազան ենթաակցիզային ապրանքների համար՝ դիմումը լրացրած անձի ազգային արժույթով արտահայտված: Հարկման բազան այն ենթաակցիզային ապրանքների համար, որոնց համար սահմանված են ակցիզների արժեքային (ադվալորային) դրույքաչափեր, հաշվարկվում է որպես 6-րդ եւ 8-րդ սյունակների արտադրյալ: Այն ենթաակցիզային ապրանքների համար, որոնց դեպքում սահմանված են ակցիզների հաստատուն (յուրահատուկ) դրույքաչափեր, հարկման բազան նշվում է՝ ելնելով ներմուծվող ապրանքների ծավալից՝ բնաիրային կամ արժեքային արտահայտությամբ, եւ հավասար է 5-րդ սյունակի ցուցանիշին: Այն ենթաակցիզային ապրանքների համար, որոնց դեպքում ակցիզները գանձվում են այլ լիազորված մարմնի կողմից, Մաքսային միության անդամ պետության բյուջե վճարված ակցիզների գումարը նշվում է 19-րդ սյունակում: Ընդ որում, 14-րդ, 16-րդ եւ 17-րդ սյունակներում գիծ է դրվում,

15-րդ սյունակում՝ ԱԱՀ-ի մասով հարկման բազան՝ արտահայտված դիմումը լրացրած անձի ազգային արժույթով: Հարկման բազան հաշվարկվում է որպես 6-րդ եւ 8-րդ սյունակների արտադրյալ: Ենթաակցիզային ապրանքների համար ԱԱՀ-ի մասով հարկման բազան որոշվում է՝ հաշվի առնելով 19-րդ սյունակում նշված ակցիզների գումարը,

այն դեպքում, եթե նման բան նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ, 15-րդ տողում նշված հարկման բազան հաշվարկվում է՝ հաշվի առնելով ծախսերի այն գումարները, որոնք նախատեսված են հարկման նպատակներով գնի որոշման սկզբունքները կարգավորող օրենսդրությամբ,

16-րդ, 17-րդ եւ 18-րդ սյունակներում՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ ակցիզների եւ ԱԱՀ-ի դրույքաչափերը: Եթե օրենսդրությամբ նախատեսվում է ապրանքների ԱԱՀ-ով եւ(կամ) ակցիզներով հարկումից ազատումը՝ Մաքսային միության անդամ պետության տարածք դրանց ներմուծման ժամանակ, ապա սյունակներում գրվում է «արտոնություն» բառը: Այն ենթաակցիզային ապրանքների մասով, որոնց համար սահմանված են հաստատուն (յուրահատուկ) դրույքաչափեր, 16-րդ տողում նշվում է 8-րդ սյունակում նշված արժույթի փոխարժեքի

հիման վրա ազգային արժույթով վերահաշվարկված ակցիզների դրույքաչափը: Այն ենթակցիզային ապրանքների մասով, որոնց համար սահմանված են հարկի արժեքային (ադվալորային) դրույքաչափեր, 17-րդ տողում նշվում է տոկոսներով արտահայտված դրույքաչափը,

19-րդ տողում՝ 14-րդ սյունակում նշված հարկման բազայի համար ակցիզների գումարը, որն ապրանքների գնորդը հաշվարկվել է՝ ելնելով 16-րդ սյունակում (հաստատուն (յուրահատուկ) դրույքաչափի կիրառման դեպքում) կամ 17-րդ սյունակում (արժեքային (ադվալորային) դրույքաչափի կիրառման դեպքում)) նշված կիրառվող հարկային դրույքաչափերից:

20-րդ սյունակում՝ ԱԱՀ-ի գումարը, որը հաշվարկվել է 15-րդ սյունակում նշված հարկման բազայի համար՝ 18-րդ սյունակում նշված կիրառվող հարկի դրույքաչափերից ելնելով:

Այն դեպքում, երբ Մաքսային միության մեկ անդամ պետության տարածքից Մաքսային միության մեկ այլ անդամ պետության ապրանքների տեղափոխումը հաստատող տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթում առկա է հանրագումարն արտահայտող տող, ապա թույլատրվում է տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթի հանրագումարն արտահայտող տողի տեղեկությունների տեղափոխումը դիմումի մեկ տող՝ ներմուծվող նույնանման ապրանքների ընդհանուր անվանումը նշելով:

Եթե տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթում նշված են անուղղակի հարկերի տարբեր դրույքաչափերով հարկվող եւ տարբեր չափման միավորներ ունեցող ենթակցիզային ապրանքներ կամ ներկայացված են անուղղակի հարկերի տարբեր դրույքաչափերով հարկվող եւ տարբեր չափման միավորներ ունեցող ապրանքներին վերաբերող ցուցանիշներ, ապա ապրանքների բոլոր անվանումները (յուրաքանչյուր ապրանքային դիրքը) տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթից տեղափոխվում են դիմում:

Եթե տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթուղթը, որում արտացոլված են մի քանի նույնանման ապրանքներ, առկա չէ հանրագումարն արտահայտող տող, ապա տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթի յուրաքանչյուր տողում արտացոլված ցուցանիշները տեղափոխվում են դիմում: Ընդ որում, դիմումի 9-րդ եւ 10-

րդ տողերում նշվում են միեւնոյն տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթի տեղեկությունները:

Եթե հաշիվ-ապրանքագրում թվարկված են մի քանի տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթերում նշված ապրանքներ, ապա դիմում են տեղափոխվում յուրաքանչյուր տրանսպորտային (ապրանքն ուղեկցող) փաստաթղթի ապրանքային դիրքերը՝ հաշվի առնելով վերոհիշյալ պահանջները: Ընդ որում, դիմումի 11-րդ եւ 12-րդ սյունակներում կրկնվում են այդպիսի հաշիվ-ապրանքագրի տվյալները:

4. Դիմումի երրորդ բաժինը լրացվում է հետտեյալ դեպքերում՝

Եթե դիմումի 1-ին բաժնում նշված վաճառողի կողմից դիմումի 1-ին բաժնում նշված գնորդին ապրանքներ իրացնելու շրջանառությունը (գործառնությունները) անուղղակի հարկերով հարկման օբյեկտ չեն Մաքսային միության անդամ՝ վաճառողի պետության օրենսդրության համաձայն, քանի որ Մաքսային միության անդամ՝ վաճառողի պետության տարածքը չի ճանաչվում այդպիսի ապրանքների իրացման վայր: Ընդ որում, «Վաճառող (կոմիտենտ, հանձնարարող, պրինցիպալ)» 08 տողում նշվում է ապրանքների արտահանման տարածք հանդիսացող Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողը, որն այդ ապրանքների իրացման ժամանակ կիրառել է ԱԱՀ-ի զրո տոկոսով դրույքաչափի (ակցիզներից ազատում): 12-րդ տողում նշվում են 08 եւ 09 տողերում նշված գնորդի եւ վաճառողի կողմից կնքված պայմանագրի վավերապայմանները (պայմանագրի համարն ու ամսաթիվը, մասնագրերի համարներն ու ամսաթվերը)՝

գնորդին (տող 02)՝ կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի միջոցով ապրանքի իրացման ժամանակ: Ընդ որում, 12-րդ տողում արտացոլվում են կոմիսիայի, հանձնարարության կամ գործակալության պայմանագրի վավերապայմանները, իսկ 08 եւ 09 տողերում՝ տվյալ պայմանագրի կողմերը:

5. Այն դեպքում, երբ ապրանքի առաքմանը մասնակցում է երեքից ավել անձ, հարկ վճարողը հավելվածում նշում է տեղեկություններ ապրանքների իրացման (ապրանքների տեղափոխման) գործարքների մասին՝ սկսած վաճառողից (Մաքսային միության անդամ պետության հարկ վճարողից), որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, եւ որը հարկային մարմին ներկայացնում է ԱԱՀ-ի զրո տոկոս դրույքաչափի կիրառման իրավաչափությունը հաստատող փաստաթղթեր, մինչ եւ գնորդը (դիմումը ներկայացնող

հարկ վճարողը՝ նշելով համապատասխան գործարքների մասնակից անձանց, ինչպես նա եւ պայմանագրերի տվյալները՝ անվանումը (ՎՀՀ, ՀՎՆՀ /ՀՀԾ, ՀՎԳՀ կամ ԲՆՀ կամ ԱՆՀ), երկրի ծածկագիրը, նրա գտնվելու (բնակության) վայրը, պայմանագրի համարը եւ ամսաթիվը, մասնագրերի համարները եւ ամսաթվերը:

6. Դիմումն ընդունած հարկային մարմնի պաշտոնատար անձը պետք է «Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման եւ դրանց վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի մասին» արձանագրությամբ նախատեսված՝ դիմումը եւ փաստաթղթերը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում այն ուսումնասիրի եւ հաստատի անուղղակի հարկերի վճարման (հարկազատման կամ վճարման այլ եղանակի) փաստը, կամ հիմնավորված կերպով մերժի համապատասխան հաստատման տրամադրումը եւ կատարի համապատասխան նշումներ դիմումի 2-րդ բաժնում: